

*Համարը*  
*Տիպը* Համաձայնագիր  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԱԳՆՊՏ 2016.07.13/1(35)  
*Ընդունող մարմինը* Հայաստանի Հանրապետություն  
*Ստորագրող մարմինը*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 22.01.2016

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Մոսկվա  
*Ընդունման ամսաթիվը* 19.05.2015  
*Ստորագրման ամսաթիվը* 19.05.2015  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԾԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

### *Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին*

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),  
ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև 1994 թվականի օգոստոսի 17-ի՝ «Արդյունաբերական վթարների, տարերային աղետների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

#### Հոդված 1

Կողմերը Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և երրորդ երկրների տարածքներում արտակարգ մարդասիրական արձագանքման խնդիրների իրականացմանը աջակցելու նպատակով հիմնադրում են ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն):

#### Հոդված 2

Կենտրոնն ստեղծվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:  
Կենտրոնն իրավունք ունի ստեղծելու մասնաճյուղեր և ներկայացուցչություններ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածքներում:

#### Հոդված 3

Կենտրոնը միջկառավարական մարդասիրական ոչ առևտրային կազմակերպություն է՝ օժտված իրավաբանական անձի իրավունքներով Կողմերի պետությունների տարածքներում՝ Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:  
Կենտրոնը զրանցվում է Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

#### Հոդված 4

Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է սույն Համաձայնագրին, Կողմերի պետությունների մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերին, գտնվելու վայրի օրենսդրությանը և Կենտրոնի

կանոնադրությանը համապատասխան (համաձայն հավելվածի):

Իր գործունեությունն իրականացնելիս Կենտրոնը փոխգործակցում է Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև մասնագիտացված և այլ միջազգային կառույցների հետ:

Կենտրոնը չի կարող իրականացնել այնպիսի գործունեություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ուղղված է Կողմերի պետությունների շահերի դեմ:

#### **Հոդված 5**

Սույն Համաձայնագրի իրագործման պատասխանատվությունը դրվում է Կողմերի հետևյալ լիազոր մարմինների վրա.

Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարության,

հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության:

Սույն Համաձայնագրի իրագործման համար և փոխգործակցության խորացման նպատակով Կողմերի լիազոր մարմիններից յուրաքանչյուրը անհրաժեշտության դեպքում կարող է մյուս Կողմի լիազոր մարմնում նշանակել իր ներկայացուցիչներին:

#### **Հոդված 6**

Հայկական կողմից նշանակված Կենտրոնի աշխատակիցների իրավական կարգավիճակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ռուսական կողմից նշանակված Կենտրոնի աշխատակիցները Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելիս ունեն «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի՝ 1961 թվականի ապրիլի 18-ի կոնվենցիայի համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության վարչատեխնիկական անձնակազմի կարգավիճակին համարժեք իրավական կարգավիճակ:

#### **Հոդված 7**

Կենտրոնն ստեղծվում է Կողմերի պետությունների մասնային սկզբնական վճարումների հիման վրա:

Կողմերի պետությունների մասնային սկզբնական վճարը ներառում է Կողմերի պետությունների կողմից Կենտրոնին օգտագործման իրավունքով փոխանցվող՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բյուջետային միջոցները, ինչպես նաև շարժական և անշարժ գույքը:

#### **Հոդված 8**

Կենտրոնի կառուցվածքը և գործունեության կազմակերպումը սահմանվում են Կենտրոնի կանոնադրությամբ, որը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն է:

#### **Հոդված 9**

Կենտրոնի կողմից իրականացվող նախագծերում և ծրագրերում կարող են մասնակցել միջազգային կազմակերպությունները, երրորդ պետությունները, ինչպես նաև այդ պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Կողմերի լիազորված մարմինների փոխադարձ համաձայնությամբ և Կողմերի լիազոր մարմինների ու հնարավոր մասնակցի միջև պայմանավորվածություններով սահմանված պայմաններով:

#### **Հոդված 10**

Կենտրոնի պաշտոնական լեզուներն են հայերենը և ռուսերենը:

#### **Հոդված 11**

Կենտրոնի գործունեությանն առնչվող անհաղթահարելի ուժի հանգամանքների ծագման դեպքում Կողմերի լիազոր մարմինները սեղմ ժամկետում ձեռնարկում են Կենտրոնի աշխատակիցների կյանքի համար անվտանգ պայմանների ապահովման, ինչպես նաև Կենտրոնի գույքի պահպանմանը և Կենտրոնի գործունեության շուտափույթ վերականգնմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ:

### **Հոդված 12**

Կողմերը Կենտրոնին տրամադրում են Կենտրոնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ առավելություններ, արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնք սահմանվում են Կողմերի միջև՝ առանձին համաձայնագրով:

### **Հոդված 13**

Կենտրոնի գործունեության դադարեցման դեպքում Կողմերը ձևավորում են լուծարման հանձնաժողով և սահմանում դրա աշխատանքի պայմաններն ու կարգը:

### **Հոդված 14**

Սույն Համաձայնագրի իրականացման և մեկնաբանման հետ կապված՝ Կողմերի միջև ծագող վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

### **Հոդված 15**

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

### **Հոդված 16**

Կենտրոնի աշխատանքներին մասնակցելու ցանկություն երրորդ պետությունների հայտնելու դեպքում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է կնքվել երրորդ պետությունների մասնակցության հարցերը կարգավորող նոր միջազգային պայմանագիր:

### **Հոդված 17**

Սույն Համաձայնագիրն սկսում է կիրառվել ստորագրման օրվանից 60 օր հետո և ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցումն ստանալուց 30 օր հետո:

Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու պահից 5 տարվա ընթացքում և ամեն անգամ ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը Համաձայնագրի գործողության հերթական ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2015 թվականի մայիսի 19-ին, հայերեն և ռուսերեն բնօրինակներով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

*Հավելված*  
*«Հայաստանի Հանրապետության Կառավարության*  
*և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև*  
*ռուս-հայկական մարդասիրական արձագանքման*  
*կենտրոնի ստեղծման մասին» 2015թ.*  
*մայիսի 19-ի՝ համաձայնագրի*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի

### Հոդված 1

Սույն Կանոնադրությունը սահմանում է ռուս-հայկական մարդասիրական արձագանքման Կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կարգավիճակը, կառավարման մարմինները, ձևավորման և գործունեության կարգը:

### Հոդված 2

Կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և երրորդ երկրների տարածքներում արտակարգ մարդասիրական արձագանքման խնդիրների իրականացմանն աջակցելու նպատակով ստեղծված միջկառավարական ոչ առևտրային մարդասիրական կազմակերպություն:

### Հոդված 3

Կենտրոնի հիմնադիրներն են Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը:

Կենտրոնն օգտվում է Կողմերի պետությունների տարածքներում իրավաբանական անձի կարգավիճակից՝ Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

Կենտրոնը տեղակայվում է Կոտայքի մարզի Գետարգել բնակավայրում (Հայաստանի Հանրապետություն):

### Հոդված 4

Կենտրոնն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք և իր անվանմամբ ձևաթղթեր:

### Հոդված 5

Կենտրոնն իրավունք ունի բացելու բանկային հաշիվներ, կնքելու պայմանագրեր և դատավարության ընթացքում հանդես գալու որպես կողմ:

### Հոդված 6

Կենտրոնն իրականացնում է հետևյալ խնդիրների կատարումը.

արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն, ներառյալ հրդեհաշիջման աշխատանքների իրականացումը,

արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանն անհետաձգելի մարդասիրական օգնության ցուցաբերում,

Հայաստանի Հանրապետության և երրորդ պետությունների տարածքներում համատեղ նախագծերի և ծրագրերի իրականացում,

մարդասիրական ականազերծման նախագծերի գծով մասնագետների պատրաստում և ականազերծման իրականացում,

արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման բնագավառում մասնագետների ուսուցում և որակավորման բարձրացում,

ժամանակակից հրշեջ-փրկարարական միջոցների և տեխնոլոգիաների փորձարկումների իրականացում և ցուցադրում,

Կենտրոնի ստեղծման նպատակներին չհակասող այլ խնդիրների իրականացում:

Կենտրոնի առջև դրված խնդիրների իրականացումն ապահովելու նպատակով Կողմերը տրամադրում են փոխհամաձայնեցված քանակությամբ ուժեր և միջոցներ, ինչպես նաև ստեղծվում և պահպանվում են նյութատեխնիկական միջոցների պաշարներ:

## Հոդված 7

Կենտրոնի կառավարման և վերահսկման մարմիններն են վարչությունը, տնօրինությունը և վերստուգող հանձնաժողովը:

## Հոդված 8

Վարչությունը Կենտրոնի կառավարման բարձրագույն մարմինն է:

Վարչության կազմում ընդգրկվում է 6 անդամ, այդ թվում`

Ռուսական կողմի լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվող 3 անդամ, որոնցից մեկը հանդիսանում է վարչության համանախագահ,

Հայկական կողմի լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվող 3 անդամ, որոնցից մեկը հանդիսանում է վարչության համանախագահ:

## Հոդված 9

Վարչության անդամները նշանակվում են 3 տարով` երկրորդ անգամ նշանակվելու հնարավորությամբ:

## Հոդված 10

Վարչությունն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, այդ թվում` նաև ինտերակտիվ անցկացման ձևաչափով:

Վարչության նիստը հրավիրվում է վարչության համանախագահի կողմից:

Վարչության համանախագահը կարող է նաև վարչության նիստ հրավիրել վարչության որևէ անդամի կամ տնօրենի գրավոր հարցման հիման վրա:

Վարչության նիստերին վարչության համանախագահները նախագահում են հերթականությամբ:

## Հոդված 11

Վարչությունն անցկացնում է տարեկան առնվազն 2 նիստ:

Վարչության նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Վարչության որոշումներն ընդունվում են փոխհամաձայնության (կոնսենսուսի) հիման վրա:

Քվեարկության ընթացքում վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

## Հոդված 12

Վարչությունը`

հավանություն է տալիս Կենտրոնի ֆինանսական ծրագրին,

հաստատում է Կենտրոնի տարեկան հաշվեկշիռը և գործունեության հաշվետվությունը,

հաստատում է Կենտրոնի աշխատանքային և զարգացման ծրագրերը,

մասնակցում է Կենտրոնի` ուժերի և միջոցների օգտագործման վերաբերյալ որոշումների մշակմանը,

հաստատում է Կենտրոնի կառուցվածքը, հաստիքացուցակը, ինչպես նաև Կենտրոնի, վարչության և

վերստուգող հանձնաժողովի կանոնադրությունները,

Կողմերի լիազոր մարմինների քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ սույն կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

իրականացնում է այլ գործառնություններ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագրին, Կենտրոնի մասին կանոնակարգին և սույն կանոնադրությանը համապատասխան:

## Հոդված 13

Վարչության անդամի լիազորությունները դադարում են՝ պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքում, վարչության անդամի անձնական դիմումի հիման վրա, 6 ամսից ավել ժամանակահատվածում վարչության անդամի պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, պաշտոնից ազատելու դեպքում:  
Վարչության անդամին պաշտոնից ազատելու մասին որոշումն ընդունում է նրան նշանակած Կողմի լիազոր մարմնի ղեկավարը:  
Վարչության նոր անդամի նշանակումը կատարվում է վարչության անդամին պաշտոնից ազատելու մասին որոշումն ընդունելու օրվանից 30 օրվա ընթացքում:

#### **Հոդված 14**

Կենտրոնի տնօրինությունը Կենտրոնի գործադիր մարմինն է:  
Տնօրինության կազմի մեջ մտնում են տնօրենը, համատնօրենը, տնօրենի տեղակալները և այլ անդամներ, որոնք նշանակվում են երկու տարի ժամկետով, հավասարության սկզբունքով՝ երկրորդ անգամ նշանակվելու հնարավորությամբ:  
Տնօրենին, համատնօրենին և տնօրենի տեղակալներին նշանակում են Կողմերի լիազոր մարմինների ղեկավարները:  
Կենտրոնի ձևավորումից հետո առաջին երկու տարվա ժամանակաշրջանի համար տնօրենի պաշտոնին նշանակվում է Հայկական կողմի ներկայացուցիչը, իսկ համատնօրենի պաշտոնին՝ Ռուսական կողմի ներկայացուցիչը:  
Կենտրոնի տնօրինության անդամ կարող է նշանակվել այն անձը, ով ունի Հայաստանի Հանրապետության կամ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն:

#### **Հոդված 15**

Տնօրինությունը ղեկավարում է տնօրենը, որը ներկայացնում է Կենտրոնի շահերը և օժտված է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագրով, սույն կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքներով և պարտականություններով:  
Կենտրոնի տնօրենը՝ կազմակերպում և ղեկավարում է Կենտրոնի աշխատանքները, սահմանում է Կենտրոնի աշխատակիցների պաշտոննեական պարտականությունները, հսկողություն է իրականացնում Կենտրոնի աշխատանքների օրինականության նկատմամբ, կատարում է վարչության որոշումները, իրականացնում է այլ գործառնություններ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագրին, կենտրոնի կանոնակարգին և սույն կանոնադրությանը համապատասխան:

#### **Հոդված 16**

Տնօրենը Կենտրոնի գործունեության սկզբունքային հարցերով որոշումներն ընդունում է՝ համաձայնեցնելով համատնօրենի հետ:  
Այդ հարցերի ցանկը սահմանվում է Կենտրոնի կանոնակարգով:  
Համատնօրենը փոխարինում է տնօրենին նրա բացակայության դեպքում և կատարում այլ պարտականություններ՝ Կենտրոնի կանոնակարգին համապատասխան:

#### **Հոդված 17**

Կենտրոնի տնօրենի լիազորությունները դադարում են՝ պաշտոնավարման ժամկետի ավարտի դեպքում, տնօրենի անձնական դիմումի հիման վրա,

6 ամսվա ընթացքում պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, պաշտոնից ազատելու դեպքում:

Տնօրենին, համատնօրենին և տնօրենի տեղակալներին պաշտոնից ազատելու մասին որոշումն ընդունում է նրանց նշանակած Կողմի լիազոր մարմնի ղեկավարը:

Նոր տնօրենի, համատնօրենի և տնօրենի տեղակալների նշանակումը կատարվում է տնօրենին, համատնօրենին և տնօրենի տեղակալներին պաշտոնից ազատելու մասին որոշումն ընդունելու օրվանից 30 օրվա ընթացքում:

### **Հոդված 18**

Վերստուգիչ հանձնաժողովը Կենտրոնի վերահսկողություն իրականացնող մարմինն է:

Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընդգրկված է 6 անդամ, այդ թվում`

Ռուսական կողմի լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվող երեք անդամ,

Հայկական կողմի լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվող երեք անդամ:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ են նշանակվում Կենտրոնի աշխատակիցներ չհանդիսացող և Կենտրոնի գործունեության հետ առնչություն չունեցող անձինք:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամների լիազորությունները գործում են 3 տարի:

### **Հոդված 19**

Վերստուգիչ հանձնաժողովը`

հսկողություն է իրականացնում Կենտրոնի ֆինանսական գործունեության նկատմամբ,

ուսումնասիրում է հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռը, այլ փաստաթղթեր և դրանց վերաբերյալ կազմում եզրակացություններ,

իրականացնում է վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգին համապատասխան այլ գործառույթներ:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն`

ծանոթանալու հաշվապահական հաշվառմանը, հաշվետվություններին, բանկային գործառույթների և Կենտրոնի գործունեությանն առնչվող այլ փաստաթղթերի,

Կենտրոնի աշխատակիցներից ստանալու վերստուգիչ հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ և տեղեկանքներ,

վարչության և տնօրինության քննարկմանը ներկայացնելու Կենտրոնի ֆինանսական գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի լրամշակմանն ուղղված առաջարկություններ:

Վերստուգիչ հանձնաժողովը ամեն տարի Կողմերի լիազոր մարմիններին է ներկայացնում ստուգման արդյունքների հաշվետվությունը` կցելով համապատասխան նյութեր:

Կողմերի լիազոր մարմինները կարող են հարցում անել վերստուգիչ հանձնաժողովից Կենտրոնի գործունեության վերաբերյալ լրացուցիչ նյութեր ստանալու վերաբերյալ:

Վերստուգիչ հանձնաժողովը պատրաստում է առանձին եզրակացություն Կողմերի լիազոր մարմինների ղեկավարների համար Կենտրոնի գործունեության կանոնների և ընթացակարգերի խախտման և Կենտրոնի ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման փաստերի առնչությամբ:

### **Հոդված 20**

Կենտրոնի գործունեության ֆինանսավորումն իրականացվում է`

Կողմերի պետությունների տարեկան բյուջետային վճարումների հաշվին,

Կենտրոնի գործունեությունն օժանդակելու մեջ շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց դրամաշնորհների և բարեգործական միջոցների հաշվին,

երրորդ պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Կենտրոնին տրամադրված միջոցների հաշվին,

Կենտրոնի կողմից թույլատրված գործունեության տեսակներից, այդ թվում` ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին:

Կենտրոնի գործունեության ապահովման համար կարող է օգտագործվել այլ կողմնակի աղբյուրներից ստացված նյութական միջոցների տրամադրման և ծառայությունների մատուցման տեսքով աջակցությունը:

## Հոդված 21

Կենտրոնն ստեղծվում է Կողմերի պետությունների մասնաշին վճարների հիման վրա:

Կողմերի պետությունների մասնաշին սկզբնական վճարումը ներառում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բյուջետային միջոցները, ինչպես նաև Կողմերի պետությունների կողմից օգտագործման իրավունքով Կենտրոնին տրամադրված շարժական և անշարժ գույքը:

Կենտրոնի գույքն իր մեջ ներառում է Կողմերի պետությունների կողմից օգտագործման իրավունքով որպես մասնաշին սկզբնական վճար տրամադրված դրամական միջոցները և գույքը, ինչպես նաև Կենտրոնի գործունեության ընթացքում նրա կողմից ստեղծված կամ ձեռք բերված դրամական և այլ միջոցները, մտավոր գործունեության արդյունքները:

Կենտրոնին փոխանցվող գույքի գույքագրումը և Կողմերի պետությունների մասնաշին վճարների արժեքի գնահատումը կիրականացվեն համատեղ հանձնաժողովի կողմից՝ Կենտրոնի ստեղծումից հետո 4 ամսվա ընթացքում:

Կենտրոնի գույքը չի կարող ենթարկվել խուզարկության, բռնագրավման, արգրավման, հարկադիր օտարման և որևէ այլ ձևով վարչական կամ դատական ներգործության միջոցների կիրառման:

## Հոդված 22

Արձագանքման կարգը, Կենտրոնի գործունեության և վերակազմավորման կարգը սահմանվում են Կենտրոնի կանոնակարգով:

## Հոդված 23

Տնօրինությունը հաստատում է ծառայողական գաղտնիք պարունակող այն փաստաթղթերը և տեղեկությունները, որոնց տրամադրումը համապատասխան լիազորություններ չունեցող անձին կարող է Կողմերի համար հանգեցնել բացասական հետևանքների և վնաս հասցնել Կենտրոնի գործունեությանը:

*Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. հունվարի 22-ին*